ԼԻԲԱՆԱՆԻ ՈՒ ՍՈՒՐԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ԹՈՒՐՔԵՐԻՑ 1918ԻՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԸ

ՍԱՄՈՒԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ (poghosyansamvel@yahoo.com)

ՄՈՒՏՔ

Յօդուածի նպատակն է վեր հանել Մեկիտոյի ճակատամարտից յետոյ՝ 1918 Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամիսներին բրիտանական զօրքերի կողմից Սուրիայի ու Լիբանանի ազատագրումը թուրքերից: Լուսաբանուած է ֆրանսական զօրախմբի կազմում գործող Արեւելեան (Հայկական) լեգէոնի գործունէութիւնը, նրա դերը Լիբանանի ազատագրութեան գործում: Ռազմական պատմաբանների ուսումնասիրութիւնների ու ժամանակակիցների յուշերի հիման վրայ ներկայացուել են բրիտանական զօրքերի առաջխաղացումը Լիբանանի ու Սուրիայի տարածքում: Սկզբնաղբիւրների ուսումնասիրութեամբ ճշգրտուած է նաեւ Հայկական լեգէոնի անցած ուղին:

Ուսումնասիրութեան համար հիմնական աղբիւր են հանդիսացել Հայաստանի ազգային արխիւի նիւթերը, ականատեսների յուշերը, օտարերկրացի ռազմական պատմաբանների ուսումնասիրութիւնները: Պատմահամեմատական վերլուծութեան մեթոդով եւ պատմականութեան սկզբունքով բացայայտուել եւ լուսաբանուել է հիմնախնդիրը: Ներկայացուել է Հայկական լեգէոնի դերակատարութիւնը Պէյրութի ազատագրութեան, հայ գաղթականների փրկութեան գործում:

ԴԱՄԱՍԿՈՍԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

1918 Սեպտեմբերի 19-25ը տեղի ունեցած Մեկիտոյի ճակատամարտում Պաղեստինի թուրքական երեք բանակները գլխովին ջախջախուեցին: Ռազմաճակատի մի հատուածում՝ Արարայում, չափազանց բարձր մարտական որակներ ցոյց տուեց Հայկական լեգէոնը: Այդ յաղթանակից յետոյ բրիտանական զօրքերի հրամանատար, զօրավար Էդմունդ Ալենպին ուժերը վերադասաւորեց եւ Սեպտեմբերի 26ին ուղղուեց հիւսիս՝ Սուրիա եւ Լիբանան: Թուրքերն ամբողջովին բարոյալքուել էին, անընդունակ էին որեւէ լուրջ դիմադրութեան: Բրիտանացիների գլխաւոր խնդիրն էր գրաւել Հալէպը:

Մեծն Բրիտանիայի ռազմական խորհուրդը համոզուած էր, որ Հալէպի գրաւումից յետոյ թուրքերը կը դադարեցնեն պատերազմը: Դա էր պատճառը, որ ռազմական խորհուրդը Ալենպիին առաջարկեց հեծելազօրի ուժերով հնարաւորինս արագ հասնել 480 կմ հեռաւորութեան վրայ գտնուող Հալէպին: Սակայն զօրավարը հրաժարուեց միայն հեծելազօրի ուժերով այդքան հեռաւոր ռազմարշաւ իրականացնել: Երկար ճանապարհից յոգնած հեծելազօրը ստիպուած կը լինէր բախուել Հալէպի թուրքական 25,000նոց բանակին, որն այդ ընթացքում կարող էր Անատոլիայից թարմ ուժեր ստանալ:

Ռազմական խորհրդում քննարկուեց նաեւ Ալեքսանտրէթում ցամաքահանում կատարելու եւ այնտեղից Հալէպ շարժուելու նախագիծ, սակայն հաշուի առնելով Տարտանէլի 1915ի ցամաքահանման ձախող փորձը, այն մերժուեց: Նման պայմաններում, Ալենպին որոշեց ամբողջ զօրքով առաջանալ, որն աւելի դանդաղ, բայց ապահով կը լինէր[1]: Նա՝ որպէս հեծելազօրի թիրախ ընտրեց Դամասկոսը, իսկ հետեւակի հիմնական ուժերը որոշեց ծովափով շարժել դէպի Պէյրութ եւ Թրիփոլի: Կատաղի մարտերից յետոյ Սեպտեմբերի 30ին էմիր Ֆէյսալի արաբական, իսկ Հոկտեմբերի 1ին բրիտանական զօրքերը մուտք գործեցին Դամասկոս[2]: Այնտեղ գերի յանձնուեց աւելի քան 20,000 թուրք զինուոր[3]: Մեկիտոյի ճակատամարտից յետոյ դա բրիտանական զօրքերի յաջորդ խոշոր յաղթանակն էր:

Դամասկոսում կենտրոնացած շուրջ 30,000 հայ տարագիրներն ուրախութեամբ ընդունեցին ազատարար բանակին[4]: Երկար տառապանքներ ապրած տեղի հայ գաղթականները - հիմնականում կիլիկիահայեր[5] - վերջնականապէս ազատուեցին մահուան ճիրաններից: Հոկտեմբերի 3ին Անդրանիկ Կենճեանի ատենապետութեամբ կազմուեց ժամանակաւոր ազգային վարչութիւն[6]:

ՊԷՅՐՈՒԹԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Դաշնակից բանակների կարեւոր նպատակակէտերից էր Պէյրութի ազատագրումը: Այն գրաւուեց առանց մարտերի: Դեռեւս Սեպտեմբերի 30ին թուրքերն ու գերմանացիները հեռացան քաղաքից՝ նախապէս ոչնչացնելով սննդի պաշարները: Քաղաքում առանց այդ էլ սով էր տիրում, եւ պատերազմի տարիներին տեղի եւ Լեռնալիբանանի բնակչութեան գրեթէ կէսը սովամահ էր եղել: Փաստօրէն՝ Պէյրութի բնակչութիւնը կանգնեց ամբողջական սովի եզրին[7]:

Արեւելեան լեգէոնի Գ. գումարտակը Սեպտեմբերի 29ին Կիպրոսի Ֆամակուսթա նաւահանգստից բրիտանական «Պըրկըն» նաւով շարժուեց ռազմաճակատ: Յաջորդ օրը նրանց տեղափոխող նաւը կանգ առաւ Հայֆայի նաւահանգստի մօտ: Իսկ Հոկտեմբերի 1ին հայ եւ սուրիացի զինուորները ափ դուրս եկան Պէյրութի նաւահանգստում: Տեղի բնակչութիւնը խանդավառութեամբ ընդունեց ազատարար զինուորներին՝ նրանց ճանա-

---

[1] William Thomas Massey, *Allenby's final triumph*, Constable and Co., London, 1920, էջ 222:

[2] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), Ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 1:

[3] Massey, էջ 223:

[4] ՀԱԱ, Ֆ. 422, ց. 1, գ. 675, թ. 13-14:

[5] ՀԱԱ, ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 3:

[6] Անդրանիկ Կէնճեան, *Հալածականի յուշեր 1914-1918*, տպ. Արարատ, Պէյրութ, 1964, էջ 146:

[7] Massey, էջ 283:

պարիզ պատելով ծաղիկներով: Հայ զինուորները հաստատուեցին զօրանոցի վերածուած Ֆրանսական համալսարանի տարածքում: Սպայակոյտը տեղաւորուեց շէնքում, իսկ զինուորների համար վրաններ խփուեցին բակում: Նաւի բեռնաթափումը աւարտուեց միայն Հոկտեմբերի 3ին[8]: Որոշ աղբիւրներում Գ. գումարտակի Պէյրութ հասնելու օր է նշւում Հոկտեմբերի 6ը[9]:

Հոկտեմբերի 7ին, երբ բրիտանական առաջապահ հետախուզական ուժերը հասան Պէյրութ, պարզեցին, որ այն արդէն ազատագրուած է Արեւելեան լեգէոնի կողմից[10]: Ինչպէս տեսնում ենք, Կիպրոսից ժամանած հայկական լեգէոնի Գ. գումարտակը դաշնակցային առաջին զօրախումբն էր, որը ոտք դրեց Պէյրութ: Նրանց բերած պարէնը շատերին փրկեց սովամահութիւնից: Նաեւ հայ զինուորները իրենց հացը կիսում էին պէյրութցի սովեալների հետ:

Ֆրանսացիները Մերձաւոր Արեւելքում գործելու համար ուժեր գրեթէ չունէին: Միայն Արեւելեան լեգէոնը եւ ալժիրեան հրաձիգներն էին, որ պէտք է ցոյց տային Ֆրանսայի ներկայութիւնը մի տարածաշրջանում, ուր վերջինս լուրջ նկրտումներ ունէր: Դրանով էր պայմանաւորուած այն, որ Ֆրանսան փորձեց հայկական զինուժի միջոցով առաջինը մտնել Պէյրութ՝ կանխելով դաշնակից բրիտանացիներին:

Հոկտեմբերի 10ին Պէյրութ հասան նաեւ Արեւելեան լեգէոնի Ա. եւ Բ. գումարտակները: Նրանք չափազանց յոգնած էին երկարատեւ ճանապարհից, զգալի մասը հիւանդ էր: Դա բաւական տխուր տպաւորութիւն թողեց նրանց՝ որպէս յաղթողների, ոգեւորութեամբ դիմաւորելու դուրս եկած Գ. գումարտակի զինուորների վրայ: Պէյրութի բոլոր գլխաւոր կէտերի վերահսկողութիւնն անցաւ հայ զինուորներին[11]:

ՀԱԼԷՊԻ ԳՐԱՒՈՒՄԸ

Ինչպէս նշեցինք, բրիտանական ուժերի գլխաւոր թիրախը Հալէպն էր, որի գրաւումից յետոյ նախատեսւում էր, որ Օսմանեան Կայսրութիւնը անձնատուութեան կ'ենթարկուի: Ծովափի երկայնքով շարժուող բրիտանական 7րդ հետեւակային զօրաբաժինը Հոկտեմբերի 18ին գրաւում է Թրիփոլին[12]:

---

[8] Խորէն Ա. քնյ. Աճէմեան, *Էջեր կամաւորի օրագրէս*, տպ. Համազգային, Պէյրութ, 1967, էջ 132-38:

[9] Գաբրիէլ Լազեան, *Հայաստան եւ Հայ Դատը (վաւերագրեր)*, տպ. «Նոր աստղ», Գահիրէ, 1946, էջ 192:

[10] Henry Gullett, *The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918*, 10th edition, Angus and Robertson ltd., Sydney, 1941, էջ 776-77:

[11] Աճէմեան, էջ 140-41:

[12] Massey, էջ 320:

Ալենպին որոշեց Հալէպին մօտենալ երեք փուլերով. գրաւել լիբանանեան Ռայաք աւանը, յետոյ՝ Հոմսը, ապա՝ գրոհել Հալէպ[13]:

Ռայաքը գտնւում էր Դամասկոսից մօտ 65 կմ հեռաւորութեան վրայ: Այն փոխադրական հանգոյց էր, ունէր ռազմական օդակայան, այդտեղ էին թուրքական հիմնական պահեստները, այնտեղ էին կենտրոնացուած գերմանական ու թուրքական բաւական մեծ ուժեր: Հոկտեմբերի 6ին բրիտանական զօրքերը մտան Ռայաք: Թուրքերն առանց դիմադրութեան նախորդ օրը հեռացել էին քաղաքից՝ այրելով իրենց 32 ինքնաթիռները[14]: Թուրքական բանակը չափազանց բարոյալքուած էր եւ դիմադրելու կամք չէր ցուցաբերում:

Հոկտեմբերի 15ին բրիտանական զօրքերը մտան Հոմս: Այդտեղ եւս թուրքերն առանց որեւէ դիմադրութեան նահանջել էին[15]: Հոկտեմբերի 19ին բրիտանական զօրքերը շարունակեցին յաղթարշաւը դէպի հիւսիս: Հոկտեմբերի 21ին բրիտանական օդուժը ռմբակոծեց Համա քաղաքը: Յաջորդ օրը թուրքերը նահանջեցին նաեւ Համայից[16]:

Փաստօրէն՝ Ռայաքի, Հոմսի ու Համայի գրաւումից յետոյ բրիտանական զօրքերի առաջ բացուեց ճանապարհը դէպի Հալէպ:

Ալենպին որոշեց Հալէպը գրաւել Հոկտեմբերի 26ին: Նոյն օրը սպասւում էր, որ ֆրանսական նաւատորմը ցամաքահանում կ'իրականացնի Ալեքսանտրէթում: Ֆրանսացիները ցանկանում էին առաջինը գրաւել Ալեքսանտրէթը, եւ Փարիզից հրահանգեցին Սուրիայի ֆրանսական նաւատորմի հրամանատար ծովակալ Վարնէյին գրաւելու այդ նաւահանգիստը: Հոկտեմբերի 15ին Պէյրութում Վարնէյն այդ մասին տեղեկացրեց Ալենպիին: Վերջինս համաձայնեց, որ Ալեքսանտրէթը գրաւուի ֆրանսական եւ հայկական զօրքերի միջոցով: Սակայն թուրքերը նոր համալրումներ են ստանում, ականապատում են Ալեքսանտրէթի ծովածոցը եւ հրետանային կրակով ետ են մղում ֆրանսական նաւատորմին[17]: Այդպիսով՝ ձախողուեց ֆրանսական նաւատորմի ուժերով Ալեքսանտրէթը գրաւելու ծրագիրը:

Հոկտեմբերի 23ին բրիտանական յառաջապահ զօրքերը մօտեցան Հալէպին: 5րդ հեծելազօրային դասակը հրամանատար աւագ զօրավար Հ. Մըքէնտրուն առաւօտեան ժամը 10ին պատուիրակ է ուղարկում քաղաք՝ պահանջելով յանձնուել առանց դիմադրութեան: Թուրքերը միայն ժամը 17ին պատասխանեցին՝ մերժումով: Մըքէնտրուն որոշեց դիրքաւորուել եւ սպասել հիմնական ուժերի ժամանմանը, որոնք տեղ էին հասնելու Հոկ-

---

[13] Նոյն, էջ 289:

[14] Frederic Morley Cutlack, *The Australian Flying Corps in the Western and Eastern theatres of War 1914-1918*, 11th edition, Angus and Robertson ltd., Sydney, 1941, էջ 169:

[15] Massey, էջ 299:

[16] Նոյն, էջ 302:

[17] Նոյն, էջ 302-03:

տեմբերի 25ին: Նախատեսւում էր դրա յաջորդ օրը սկսել գլխաւոր գրոհը: Արաբական զօրքերը էմիր Նասիրի գլխաւորութեամբ Հոկտեմբերի 25ին մօտեցան քաղաքին եւ նրանց մի մասը գիշերով մտաւ Հալէպ, ուր ապստամբութեան պատրաստ մեծ թուով արաբներ կային: Հոկտեմբերի 26ի առաւօտեան ժամը 6ին սկսուեց բրիտանական եւ արաբական զօրքերի գրոհը: Թուրքերը որոշ դիմադրութիւնից յետոյ ստիպուած էին յանձնել Հալէպը[18]: Տեղի հայերը մեծ խանդավառութեամբ ընդունեցին ազատարար բրիտանական եւ արաբական բանակների մուտքը քաղաք[19]:

Ինչպէս եւ սպասւում էր, Հալէպի անկումից յետոյ թուրքերը ստիպուած էին հաշտութիւն խնդրել: Մինչ այդ բրիտանական ուժերին յաջողուեց գրեթէ ամբողջութեամբ ոչնչացնել Պաղեստինում, Լիբանանում եւ Սուրիայում կենտրոնացուած թուրքական բանակները: Թուրքերը ունենում են հսկայական թուով զոհեր ու գերիներ: Ըստ Մասիի՝ գլխաւոր յարձակումը սկսելուց յետոյ մինչեւ Հոկտեմբերի կէսը գերուեցին 2417 սպայ եւ 46,409 զինուոր, որից գերմանացի էին 158 սպայ եւ 1703 զինուոր[20]: Իսկ Կուլէթը նշում է, որ Սեպտեմբերի 19ից մինչեւ զինադադարի կնքումը բրիտանացիների ձեռքն ընկաւ 75,000 գերի, այդ թւում՝ 3700 գերմանացի ու աւստրիացի, 360 հրանօթ, 800 գնդացիր, 210 բեռնատար եւ 50 մարդատար մեքենայ, 90 շոգեքարշ, 470 վագոն, 3700 բեռնակիր անասուն եւ այլ ռազմաւար[21]:

Գերի ընկան նաեւ գերմանական ու թուրքական բանակներում ծառայող բազմաթիւ հայ զինուորներ: Ալեքսանդր Այնթապլեանի վկայութեամբ, հայ գերիները յայտնուել էին ծանր վիճակում: Նա 1917 Յունիսին Մարաշի գերմանական միսիոնարական դպրոցն աւարտելուց յետոյ 10 հայ այլ տղաների հետ զօրակոչուել էր գերմանական բանակ, պարեկային ծառայութիւն էր կատարել Կիլիկիայով անցնող Պերլին-Պաղտատ երկաթուղագծի մօտ, իսկ 1918 Օգոստոսին ուղարկուել էր պաղեստինեան ճակատ: Սեպտեմբերի 21ին նա գերուել էր Աֆուլայում: Նրա վկայութեամբ հայերին, յոյներին, հրեաներին բրիտանացիները միացնում էին թուրք ռազմագերիներին, իսկ եւրոպացիներին առանձին եւ աւելի լաւ պայմաններում էին պահում: Նրան դժուարութեամբ էր յաջողուել մնալ գերմանացիների մէջ, այն էլ մօրեղբօր՝ բրիտանական գաղտնի ծառայութեան սպայ, պրոֆեսոր Յարութիւն Մուրատեանի անունը տալուց յետոյ[22]:

---

[18] Նոյն, էջ 307-09:

[19] Վահրամ Կէօքճեան, *Հայկական Կիլիկիոյ ազատագրական պայքարը (յուշեր եւ նօթեր), Ա. հտր.*, հրատ. ԹՄՄ "Մարտիրոս Տարագճեան Հիմնադրամ"ի, Պոստոն, 1979, էջ 101-2:

[20] Massey, էջ 269:

[21] Gullett, էջ 783:

[22] Paren Kazanjian, *The Cilician Armenian ordeal*, Hye Intentions, Boston, 1989, էջ 49-53:

1918 Հոկտեմբերի 30ին կնքուած Մուտրոսի զինադադարով ռազմական գործողութիւնները դադարեցին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐԻ ԵՐԹԸ ԱՐԱՐԱՅԻՑ ՊԷՅՐՈՒԹ

Սեպտեմբերի 19ի Ռաֆաթ-Արարայի մարտերից յետոյ Արեւելեան լեգէոնի Ա. եւ Բ. գումարտակները 5 օր հանգստացան, ապա սուրիական անապատներով շարժուեցին հիւսիս: Չնայած ճանապարհին թշնամու այդպէս էլ չհանդիպեցին, սակայն կիզիչ արեւի տակ իրականացուող այդ երթը բաւական ծանր էր կամաւորների համար: Ըստ Մ. Թաթարեանի՝ նրանց նաւերով կարող էին մէկ օրում Պէյրութ հասցնել, սակայն գնդապետ Լուի Ռոմիօն այդ դժուարին ռազմերթն իրականացրեց տեղացիներին ֆրանսական ուժը ցուցադրելու համար[23]:

Արարայից մինչեւ Պէյրութ 250 կմ էր, որը լեգէոնն անցաւ մեծ զրկանքների գնով: Երկար ճանապարհը, անապատի կիզիչ արեւը, ջրի պակասը, թերի սնունդը, սպանական գրիպը եւ այլ զրկանքներ հիւծեցին լեգէոնականներին: Սակայն նրանց ուժ էր տալիս այն միտքը, որ ամէն մի քայլով մօտենում էին բաղձալի նպատակին՝ Կիլիկիային:

Լեգէոնականներից Կարապետ Թորոսեանը Արարայից մեկնելու առաջին օրուայ մասին գրում է. «*մեր խանդավառութիւնը հասած էր իր գագաթնակէտին: Մենք զմեզ կը նկատէինք այն հաւատաւոր Հայերը որոնք ապենին ոչ միայն ոտքով, այլ բոպիկ ուխտի կ'երթային մեր սրբավայրերը իրենց փափաքին իրագործումը խնդրելու Հայոց սուրբերէն*»[24]:

Առաջին օրը լեգէոնը հասաւ Հայֆա եւ բանակեց ծովափին: Ծարաւը յագեցնելու համար զինուորները ստիպուած էրն ծովեզերքի մօտ աւազը փորել եւ այդ անորակ ջուրը խմել: Յաջորդ օրը լեգէոնը մտաւ Աքրա: Յաջորդող օրերին հետզհետէ յոգնածութիւնն աւելի է մեծանում: Օրերով ստիպուած էին սնուել բրիտանական չորահաց, որը այնքան էր չորացել, որ ուտելու համար պէտք է թրջէին ջրով: Սակայն այդ դժուարութիւնները չէին կարող կոտրել հայ մարտիկների կամքը, որոնք, երկար սպասումից յետոյ, մօտենում էին հայրենիքին: Երգը, պարը, կատակները բարձրացնում էին մարտիկների ոգին: Զնքուշցի երիտասարդները, որքան էլ յոգնած լինէին, երեկոյեան պարտադիր իրենց խմբապարով ոգեւորութիւն էին մտցնում[25]: Լեգէոնականները Եգիպտոսից դուրս գալուց յետոյ առաջին անգամ Լիբանանում են հանդիպում առատահոս սառը ջուր:

---

[23] Մինաս Թաթարեան, *Կամաւորի մը յուշերը*, տպ. կաթողիկոսութեան հայոց մեծի տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1960, էջ 20:

[24] Տիգրան Պօյաճեան, *Հայկական լեգէոնը. պատմական յուշագրութիւն*, տպ. Պայքար, Ուոթըրթաուն, 1965, էջ 161:

[25] Նոյն, էջ 161-62:

Առաջխաղացման ընթացքում բրիտանական զօրամասերի զինուորների կէսից աւելին վարակուեցին մալարիայով եւ սպանական գրիպով: Այդ համաճարակները նրանց փոխանցուեցին թուրքական բանակից: Արդէն Հայֆայում պարզ դարձաւ, որ սպանական գրիպի համաճարակը հասել էր նաեւ Հայկական լեգէոնին:

Տեղակալ Վահան Փորթուգալեանը գրում է. «*Այդ յառաջխաղացման ընթացքին անտեսանելի թշնամի մը բանակը կազմալուծման վտանգի ենթարկեց: Խորհրդաւոր համաճարակ մը: Ամէն օր զինուորներ, տասնեակներով, ջերմէ կը բռնուէին, բայց այլ ախտանիշներով, ու կ'իյնային՝ քալելու անկարող: Երբեմն մահով կը կնքուէր հիւանդութիւնը, որուն դարման չէին գտներ բժիշկներ: Շատ ուշ, խաղաղութենէն ետքը, հասկցուեցաւ թէ կռիւի էսպանիոլի համաճարակն էր, որ ըստ վիճակագրութեանց, աւելի զոհեր տարաւ աշխարհի մէջ քան չորս տարուան պատերազմը*»[26]: Սպանական գրիպը ահաւոր համաճարակ էր, որը 1918-20՝ խլեց 50-100 միլիոն մարդու կեանք ամբողջ աշխարհում:

Լեգէոնի բժիշկը յուսադրեց մարտիկներին նրանով, որ հայերը լայնակուրծք էին եւ կարող էին յաղթահարել այդ հիւանդութիւնը: Մօտ 800 հայ զինուորներ հիւանդացան սպանական գրիպով, որոնցից 6ը մահացան[27]: Փաստօրէն՝ երկու գումարտակների հայ զինուորների գրեթէ կէսը վարակուել էր այդ չարաբաստիկ հիւանդութեամբ:

Համաճարակի դէմ պայքարելու համար չկային դեղօրայք, պայմաններ, բժիշկներ: Հիւանդներին՝ որպէս բուժում, կերակրում էին սոխի ու լոլիկի աղցանով, որը որոշ չափով նպաստում էր ապաքինմանը: Քայլելու անընդունակ հիւանդ զինուորները երկար ժամանակ անխնամ մնում էին ճանապարհներին, քանի որ բաւարար փոխադրամիջոցնէր չկային: Դրան գումարւում էր ֆրանսացի որոշ բժիշկների ցուցաբերած անտարբերութիւնը: Հայֆայում մնացած հիւանդ լեգէոնականները Հոկտեմբերի վերջին մեկնեցին Պէյրութ. քայլելու անընդունակները՝ նաւով, իսկ մօտ 150ը՝ ոտքով[28]:

Հայկական լեգէոնը հաստատուեց Պէյրութի հարաւային մասում գտնուող մի կաթոլիկ վանքի տարածքում: Սկզբում լեգէոնականները ճաշում էին բացօթեայ: Պէյրութում այդ ժամանակ սով էր եւ բնակչութիւնը հաց էր մուրում զինուորներից: Հայ կամաւորներն իրենց հացը բաժանում էին սովեալ երեխաներին: Այդ մասին տեղեկանալով՝ հրամանատարութիւնն արգելեց բացօթեայ ճաշելը: Բրիտանական նաւերը մէկ շաբաթ անց քաղաք հասցրին սնունդ, հագուստ, դեղօրայք եւ այլ անհրաժեշտ ապրանքներ, որով զինուորների եւ բնակչութեան վիճակը բարելաւուեց[29]:

---

[26] Նոյն, էջ 165:
[27] Նոյն, էջ 163:
[28] Նոյն, էջ 165-167:
[29] Նոյն, էջ 164:

1918 Հոկտեմբերից լեգէոնը մտաւ Արեւելքի ֆրանսական զօրախմբի կազմի մէջ, որի հրամանատարն էր զօրավար Ժիլ Համելինը[30]:

Սակայն Պէյրութի ռազմավարական բոլոր կէտերի վերահսկողութիւնը բրիտանացիները հետզհետէ վերցրին իրենց ձեռքը: Հայկական լեգէոնը իրականացնում էր միայն պահակային եւ պարեկային ծառայութիւն[31]: Բրիտանացիները ամէն կերպ փորձում էին ցոյց տալ իրենց առաւելութիւնը տարածաշրջանում եւ Ֆրանսային թոյլ չտալ հաստատուելու Սուրիայում ու Լիբանանում: Դրանով էր պայմանաւորուած, որ հայ լեգէոնականներին հեռացնում էին կարեւոր տեղամասերից:

Նոյեմբերի 18ին Պէյրութում ցաւալի միջադէպ տեղի ունեցաւ: Քաղաքում զբօսնող հայ լեգէոնականների հետ ընդհարուեցին տեղի ոստիկաններն ու էմիր Ֆէյսալի զինուորները[32]: Դա Ֆէյսալի կողմից ֆրանսացիների դէմ կազմակերպուած սադրանք էր, քանի որ էմիրը ցանկանում էր Սուրիան ու Լիբանանը դարձնել արաբական անկախ պետութեան մաս: Հայերը, որպէս ֆրանսական դրօշի ներքոյ հանդէս եկող զինուորներ, դարձան արաբա-ֆրանսական հակամարտութեան զոհ:

Դէպքից միքանի օր առաջ ֆրանսական հրամանատարութիւնը տեղեկութիւն էր ստացել արաբների կողմից նախապատրաստուող զինուած գործողութեան մասին: Դրանով պայմանաւորուած՝ քաղաքի պահակակէտերում զինուորների քանակը մեծացուել էր, նրանց տրուել էր բաւարար զինամթերք:

Դէպքը տեղի ունեցաւ հետեւեալ պայմաններում: Լեգէոնականները գնումներ կատարելուց վճարեցին ֆրանսական ֆրանկով, քանի որ աշխատավարձը դրանով էին ստանում, սակայն շրջիկ առեւտրականը պահանջեց թուրքական լիրա եւ զինուորների տուած թղթադրամը արհամարհանքով ցուցադրաբար գետին նետեց: Դրանից վիճաբանութիւն ծագեց: Մօտակայքում գտնուող տեղացի ոստիկանը, մօտենալու եւ վիճաբանութիւնը դադարեցնել փորձելու փոխարէն, ատրճանակով մի քանի անգամ օդ կրակեց, որն ազդանշան հանդիսացաւ, որպէսզի անմիջապէս զանազան կողմերից միքանի տասնեակ զինուած արաբներ դուրս գան եւ յարձակուեն անզէն լեգէոնականների վրայ: Հայ զինուորներից մալաթիացի Աբրահամ Աբրահամեանը սպանուեց, իսկ պանտրմացի Յակոբը վիրաւորուեց: Մօտակայ պահակակէտի հայ լեգէոնականներն անմիջապէս օգնութեան հասան եւ կրակ բացեցին զինեալների ուղղութեամբ: Խռովարարները փախուստի դիմեցին՝ իրենց հետ տանելով մօտ երկու տասնեակ սպանուածների եւ վիրաւորների: Ֆրանսացի սպաները հայ լեգէոնականներին յորդորեցին նոր քայլեր չձեռնարկել վրէժ լուծելու համար: Սակայն հայ մարտիկ-

---

[30] Լազեան, էջ 192:

[31] Պոյաճեան, էջ 168:

[32] Լազեան, էջ 192:

ները, տուած փայլուն հակահարուածով, արդէն բաւարարուել էին եւ նոր գործողութեան չէին ձգտում[33]: Յաջորդ օրը արաբներն իրենց սպանուածների դիակները սայլերով բերեցին Պէյրութի կառավարչատուն եւ փորձեցին ներս մտնել, սակայն փոքրաթիւ հայ պահակները կարողացան այդ սադրիչներին ցրել[34]: Ըստ Ռուբէն Հերեանի՝ սպանուել էր մէկ լեգէոնական, վիրաւորուել՝ երեքը: Արաբներից սպանուել են երեքը, վիրաւորուել ութը[35]:

Այդ դէպքից յետոյ մօտ քսան օրով հայ զինուորներին ուղարկեցին Լեռնալիբանան, որպէսզի կրքերը հանդարտուեն եւ նոր ընդհարումներ չլինեն[36]: Լեգէոնի Գ. գումարտակը, մինչեւ Կիլիկիա տեղափոխուելը, հաստատուեց Պէյրութից մօտ 20 կմ հեռաւորութեան վրայ գտնուող Ճունիէ ծովեզրեայ աւանում՝ վարժարանի տարածքում[37]: Լեգէոնականները Ճունիէից այցելութեան գնացին Զմմառի հայ կաթողիկէ վանքը: Վանականները նուագախմբով եւ հիւրասիրութեամբ դիմաւորեցին հայ զինուորներին[38]: Լեգէոնական Արամ Յովսէփեանը նկատում է, որ դա միակ կարճ ժամանակաշրջանն էր, որ իրենք հանգստացել են: Ա. գումարտակը այնտեղ մնաց մօտ երկու շաբաթ, ապա վերադարձաւ Պէյրութ, սակայն զօրանոցից դուրս գալ՝ հայ զինուորներին արգելուել է մինչեւ Կիլիկիա մեկնելը[39]:

ԼԵԳԷՈՆԸ ԵՒ ՀԱՅ ՏԱՐԱԳԻՐՆԵՐԸ

Հայ զինուորները մեծ ոգեւորութիւն էին առաջացնում Ցեղասպանութիւնից փրկուած տարագիրների մօտ, բարձրացնում նրանց ոգին, յոյս ներշնչում ապագայի նկատմամբ: Տանջուած, կոտորուած, ապագայի նկատմամբ բոլորովին անյոյս տարագիրների համար յաղթական դաշնակից բանակների շարքում հայկական զօրամաս տեսնելը հրաշք էր թւում, դա նաեւ վստահութիւն էր առաջացնում, որ հայերի տառապանքները այլեւս անցեալում են: Միաժամանակ լեգէոնականները բազմաթիւ հայ կանանց ու աղիկների ազատեցին մահմետականների ձեռքից, ուղեկցեցին հայ գաղթականների կարաւանները դէպի Կիլիկիա:

Լեգէոնական Կ. Թորոսեանը գրում է.

> Մօտ 10 օր ճամբորդած էինք: Իրիկուն մը կանգ առինք բլուրի մը ստորոտը գիշերելու համար. զբաղած էինք կարգադրութիւններով, երբ տեսանք որ բլուրին գագաթը մարդ մը կանգնած՝ մեզ կը դիտէր: Խմբապետ Արեւեան, որ մեր ամենաշատ սիրուած պաշտօնեան էր, հայերէն հրամաններ կ'արձակէր վրանիս պո-

---

[33] Պօյաճեան, էջ 170-73. նաեւ՝ Աճէմեան, էջ 151-54:

[34] Աճէմեան, էջ 154:

[35] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 784, թ. 4:

[36] Թաթարեան, էջ 21:

[37] Պօյաճեան, էջ 170. նաեւ՝ Աճէմեան, էջ 156-58:

[38] Աճէմեան, էջ 159:

[39] *Արարա: Նուիրուած Արարայի հինգերորդ տարեդարձին*, հրատ. Հայ լեգէոնական միութեան, Պոստոն, 1923, էջ 29:

ռալով: Յանկարծ տեսանք որ բլուրի վրայի մարդը աղաղակ մը փրցնելով սկսաւ վազել դէպի մեզ: Մենք գործերնիս թողուցինք տեսնելու համար թէ ինչ կը պատահի: Երբ ան մօտեցաւ մեզի, կանգ առաւ, դիտեց մեզ ու հայերէն ըսաւ. «Ձեր դէմքէն կը հասկնամ որ դուք Հայ էք»: «Շիտակ ես, ըսինք, բոլորս ալ հայ ենք»: Այս խօսքին վրայ ան գրկեց զինուոր մը ու համբուրեց, յետոյ ուրիշ մը եւ ուրիշ մը: Մարդը ուրախութենէն բարձրաձայն կը խնդար ու միեւնոյն ատեն առատ արցունքի կաթիլներ կը գլորուէին անոր խորշոմած այտերէն վար: Մեր հարցումներուն պատասխանելով ըսաւ որ մօտակայ արաբ գիւղ մը կը բնակէր. այնտեղ ոչինչ ունէր բայց միայն մէկ արօտավար կորեկ եւ ըսաւ. «Գետինն անցնի իրենց կորեկը. ես այլեւս ձեզմէ չեմ բաժնուիր»: Ասոր նման 15-20 Հայեր, մեծաւ մասամբ կիներ ու անչափահասներ գտնուեցան ու հետեւեցան բանակին[40]:

Այս բնոյթի բազմաթիւ վկայութիւններ կան բոլոր լեգէոնականների յուշերում:

Փորթուգալեանը գրում է. «*Կը պատահէինք երբեմն հայ տարագիր բեկորներու, բոլորը ցնցոտիներու մէջ, լուռ, արցունքը իրենց աչքերուն մէջ՝ թերահաւատութեամբ կը դիտէին ազատարար դաշնակից բանակին անցքը: Օր մը, կ'անցնէինք գիւղէ մը, ուր կանգ առինք հանգիստի համար: Լեգէոնականները շարժեցան ըստ զինուորական հրամաններուն, որոնք կը տրուէին ֆրանսերէն: Մէկը կանչեցի եւ հրահանգ մը տուի, հայերէն, բարձրաձայն, ձի նստած ըլլալով: Իրարանցում մը տիրեց հանդիսատեսներուն մէջ: «Հա՛յ են… Հա՛յ են» կը բացականչէին, կարծես հրաշքի մը առջեւ: Ուրիշ օր մը, գնդապետ Ռօմիէոյի հրամանով, քանի մը ձիաւոր լեգէոնականներ հետս առնելով, գացինք Արաբի մը տունէն փրկել հայ աղջնակ մը, ինչ որ կատարուեցաւ, երկար բանակցութիւններէ ետքը, փափկանկատութեամբ, որովհետեւ Արաբը բարի մարդ մըն էր*»[41]: Տեղակալ Արեւեանի գլխաւորութեամբ լեգէոնականները Աքրայում արաբներից ազատեցին տէօրթեոլցի մի աղջկայ, իսկ Սամարայում ետ գնեցին սսեցի մի աղջկայ[42]:

Սպայ Վահան Արամեանն իր յուշերում գրում է, որ Հայֆայից յետոյ մտել են Կազա քաղաքը, ուր լեգէոնականները հայ գաղթականներ են փնտռել: Տեղի կաթոլիկ եկեղեցում պատսպարուած բազմաթիւ տարագիրների են հանդիպել: Այդտեղ տեղեկացել են, որ մօտակայ տներից մէկում Մարիամ անունով մի հայ աղջիկ կար, որին արաբ տանտէրը ցանկանում էր ամուսնացնել իր որդու հետ: Ֆրանսացի գնդապետի եւ Վաղարշակ վարդապետ Արշակունու հետ լեգէոնականներն ազատում են աղջկան եւ ուղարկում

---

[40] Պոյաճեան, էջ 162-63:

[41] Նոյն, էջ 164-165:

[42] Մանուկ Աւետեան, *Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ: Վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական փուեալներով*, տպ. «Le Soleil», Փարիզ, 1954, էջ 484-85:

Հայֆա, ապա՝ Փոր Սայիտ[43]: Արամեանը Բաղչէում 8 տարեկան սսեցի աղջկայ ազատեց թուրքերից եւ Այրանում ժամանակաւոր խնամքի յանձնեց մի հունգարացի ծեր զոյգի[44]:

Պէյրութում հայ զինուորները հանդիպեցին գաղթական հայերի, որոնք չափազանց թշուառ վիճակում էին: Տարագիրները, մոռանալով իրենց ծանր վիճակը, մեծ ցնծութիւն ապրեցին յաղթող բանակի շարքում տեսնելով հայ կամաւորներին[45]: Պէյրութի հայերը մեծ ուրախութեամբ դիմաւորեցին հայ զինուորներին, ամէն կերպ փորձում էին պատուել, հիւրասիրել, օժանդակել նրանց[46]:

Այսպիսով՝ Հայկական լեգէոնը կարեւոր դէրակատարում ունեցաւ հայ տարագիրների փրկութեան, ոգու բարձրացման, ապա՝ Կիլիկիա անվտանգ տեղափոխման գործում:

Պէյրութում մեծ թուով դիմումներ եղան կամաւորագրուելու Արեւելեան լեգէոնին, եւ այնտեղ 800 հայ կամաւորներից կազմաւորուեց Դ. գումարտակը[47]: Նրանց մէջ մեծ թիւ էին կազմում նաեւ օսմանեան բանակի գերուած հայ զինուորները[48]: Փաստօրէն, տարագրութեան փորձութիւնները յաղթահարած հայ երիտասարդները մեծ ցանկութիւն ունէին զէնք վերցնելու եւ մասնակցելու հայրենիքի ազատագրման գործին: Իսկ բրիտանացիների մօտ գերութեան մէջ յայտնուած թուրքական բանակի հայ ռազմագերիները հնարաւորութիւն էին ստանում ոչ միայն ազատուել գերու նուաստացնող կարգավիճակից, այլեւ տուն վերադառնալ որպէս Հայկական լեգէոնի զինուոր:

Սուրիայում, Լիբանանում, Միջագետքում գտնուող հայ գաղթականութեան մէջ մեծ էր Հայկական լեգէոնին միանալու ձգտումը: Հայաստանի եւ Սուրիայի ֆրանսական գերագոյն կոմիսար Ժորժ Պիկօն Հերեանին Պէյրութում տեղեկացրել էր, որ նախատեսւում էր հայկական զօրքի թիւը հասցնել 20,000ի: Դա բաւական ոգեւորել էր հայերին: Հալէպից մօտ 800 երիտասարդներ Հերեանի գլխաւորութեամբ հետիոտն հասան Ատանա, որպէսզի զինուորագրուեն Հայկական լեգէոնին, սակայն ֆրանսական հրամանատարութիւնը մերժեց: Գնդապետ Ռոմիօն Կիլիկիան գրաւելուց յետոյ ամէն կերպ խոչընդոտում էր հայկական զօրամասի մեծացմանը, մինչ լաւ յարաբերութիւններ էր հաստատել թուրքերի հետ[49]:

---

[43] Յարութիւն Իսկահատեան, *Վկայարան հայկական ցեղասպանութեան, հտր. Ե.*, Պէյրութ, 2013, էջ 68:

[44] Նոյն, էջ 69:

[45] Թաթարեան, էջ 20-21:

[46] Աճէմեան, էջ 142:

[47] Անդրէյ Ամուրեան, *Հայ Դպրը. հայ ժողովրդի ազատագրական ճիգերը*, տպ. «Ալիք», Թեհրան, 1977, էջ 157:

[48] Աճէմեան, էջ 142:

[49] Պօյաճեան, էջ 221-23:

Դամասկոսն ազատագրելուց անմիջապէս յետոյ Արեւելեան լեգէոնին միանալու համար կամաւորագրուել էին 1000 հայեր: Ինչպէս տեսանք, զինուորագրուել ցանկացողների թիւը շատ աւելի մեծ էր, սակայն ֆրանսական հրամանատարութիւնը դադարեցնում է կամաւորագրութիւնը[50]: Հոկտեմբերի 26ին հայկական զօրագունդը զօրահանդէս կատարեց Դամասկոսում, ապա Պապ Շարքիի Ս. Սարգիս հայկական եկեղեցում նրանց օրհնեց Կիլիկիայի Սահակ Բ. կաթողիկոսը: Հոկտեմբերի 27ին կամաւորները հայ գաղթականների խանդավառ բացականչութիւնների ներքոյ Դամասկոսից մեկնեցին Պէյրութ, որպէսզի մասնակցեն հայրենիքի ազատագրմանը[51]: Դամասկոսից Պէյրութ 800 հայ կամաւորներին առաջնորդել էր, թուրքական բանակի հարիւրապետ Սարգիս Թորոսեանը, ով աչքի էր ընկել Տարտանէլի ռազմագործողութեան ժամանակ: Պէյրութում նա հանդիպեց եղբայրներին՝ Հայկական լեգէոնի քսանապետ Բարսեղ եւ տասնապետ Արամ Թորոսեաններին, որոնք Ամերիկայից էին կամաւորագրուել: Ս. Թորոսեանը իր մարտական փորձը հայրենիքին ծառայեցրեց լեգէոնում[52]:

Պէյրութից լեգէոնի մի մասը երկօրեայ արշաւի մեկնեց Լիբանանի Քեսրուանի շրջան: Այնտեղ՝ Անթուրայի վանքում, լեգէոնականները հանդիպեցին մեծաթիւ հայ որբերի: Թուրքերը փորձել էին ազգափոխ անել նրանց՝ թուրքացնելով: Տասնեակ երեխաներ սպանուել էին, իսկ միւսները սովի ու մշտական վախի մէջ էին ապրել: Հայերէն խօսելը, իրենց հայկական անունները անգամ յիշելն արգելուել էր: Մանուկները խանդավառուած ընդառաջ վազեցին հայ զինուորներին եւ հանդիպումը շատ յուզումնալից էր: Պարտիզակցի մի մանչուկ լեգէոնականներին ասաց. «*Դուք գացէք, թուրքերը բոլորն ալ սատկեցուցէք, որ մենք ազատինք: Մենք պիտի մեծնանք, ու ձեր սա աղուորիկ լաթերը պիտի հագնինք, զինուոր ըլլանք. այն ատեն դուք հանգիստ կ'ընէք ու մենք կ'երթանք թշնամիին դէմ…*»[53]: Բնական էր, որ Ցեղասպանութեան սարսափներին ականատես մանուկների մօտ մեծ էր վրէժի զգացումը թուրք բարբարոսների նկատմամբ, սակայն միաժամանակ տեսնում ենք ապագային ուղղուած նրանց մեծ յոյսերը:

Լեգէոնը Լիբանանում, ապա Կիլիկիայում զգալի ներդրում ունեցաւ թուրքերի ձեռքում յայտնուած հայ կանանց ու աղջիկների ազատման հարցում: Միաժամանակ հայկական կանոնաւոր զօրամասի ներկայութիւնը յաղթող դաշնակիցների շարքում մեծ ոգեւորութիւն էր առաջացնում Մեծ Ե-

---

[50] ՀԱԱ, Ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 4:

[51] ՀԱԱ, Ֆ. 422, ց. 1, գ. 675, թ. 8-9:

[52] Սարգիս Թորոսեան, *Դարդանէլից մինչեւ Պաղեստին*, թրգմ. անգլերէն բնագրից՝ Լիլիթ Թութխալեան, Ցեղասպանութեան թանգարան ինստիտուտի տպագրութիւն, Երեւան, 2012, էջ 185-88:

[53] Սուրէն Պարթեւեան, *Արարա. Հայկական լեգէոնը*, տպ. Քէշիշեան, Իզմիր, 1919, էջ 106:

ղեռնը վերապրածների մէջ: Գրեթէ բոլոր երիտասարդները ցանկանում էին միանալ լեգէոնին եւ ազատագրել Կիլիկիան ու Հայաստանը:

Սակայն նրանց յոյսերը չէին արդարանալու եւ նոր հիսթափութիւն պէտք է ապրէին: Ֆրանսական ռազմական իշխանութիւնները պատերազմից յետոյ հետզհետէ փոխում են իրենց քաղաքականութիւնը Հայկական լեգէոնի նկատմամբ: Կիլիկիային ինքնավարութիւն տալու մտադրութիւն չունենալով՝ վտանգաւոր էին համարում հայկական զօրամասի մեծացումը: Հետեւաբար՝ հրաժարուեցին լեգէոնի մէջ ընդգրկել Պաղտատի աւելի քան 800, Պոլսի 600, Դամասկոսի 1000, Հալէպի 800 հայ կամաւորներին: Նրանց զինուորագրելու դէպքում լեգէոնի գումարտակների թիւը կը հասնէր 8ի: Միայն Պէյրութում կամաւորագրուած 800 հայերին վերցրին ծառայութեան, որոնցից կազմաւորուեց լեգէոնի Դ. գումարտակը:

ՄՈՒՏՐՈՍԻ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ

1918 Հոկտեմբերի 30ին Մուտրոսում ստորագրուած զինադադարով թուրքերն անձնատուութեան ենթարկուեցին: Միքանի յօդուածներ անմիջականօրէն առնչւում էին հայկական շահերի հետ:

«*Յօդուած 4. Բոլոր դաշնակցային ռազմագերիները, բոլոր հայ ռազմագերիները եւ ներկալուածները պէտք է ժողովուեն Կ. Պոլսում, որպէսզի առանց որեւէ պայմանների յանձնուեն դաշնակիցներին:*

Յօդուած 10. Տաւրոսի թունէլների համակարգի գրաւում դաշնակիցների կողմից:

Յօդուած 11. Թուրքական զօրքերն արդէն սպացել են Անդրկովկասի մի մասը դատարկելու հրաման, ընդ որում՝ մնացած զօրքերը կը հեռացուեն, եթէ տեղերում իրադրութիւնն ուսումնասիրելուց յետոյ դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ:

Յօդուած 16. Հիճազում, Ասիրում, Եմէնում, Սուրիայում եւ Միջագետքում գտնուող բոլոր թուրքական կայազօրերը պէտք է յանձնուեն մօտակայ դաշնակցային հրամանատարութեանը, բոլոր զօրքերը դուրս են բերուելու Կիլիկիայից, բացառութեամբ նրանցից, որոնք անհրաժեշտ են կարգը պահպանելու համար, ինչը կարող էր որոշուել համաձայնագրի 5րդ յօդուածով:

Յօդուած 24. Հայկական վեց վիլայէթներում անկարգութիւններ ծագելու դէպքում, դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրաւելու իրաւունք»[54]:

Այսպիսով՝ Մուտրոսի զինադադարը թուրքերին ստիպեց առանց մարտերի դուրս գալ Արեւելեան Հայաստանից եւ Կիլիկիայից, որը խիստ դրական երեւոյթ էր հայութեան համար: Կիլիկիան ազատագրուեց հիմնակա-

[54] Frederick Maurice, *The Armistices of 1918*, Oxford University Press, London, New York, 1943, էջ 85-87:

նում Արեւելեան լեգէոնի կողմից, որը 1919 Յունուարից վերանուանուեց Հայկական լեգէոն:

Սակայն զինադադարի յօդուածներն ունէին նաեւ բացասական յօդուածներ, որոնցով էր - գէթ մասամբ - պայմանաւորուած յետագայում Հայկական Հարցի ձախողումը: Արեւմտեան Հայաստանը փաստացի թողնւում էր թուրքերի ձեռքում, իսկ թուրքական բանակը չէր զինաթափւում: Դա հնարաւորութիւն տուեց Մուստաֆա Քեմալին, զինադադարից միքանի ամիս անց, հենց Արեւմտեան Հայաստանի տարածքում սկսել իր ապստամբութիւնը՝ յենուելով չզինաթափուած զօրքի վրայ: Փաստօրէն՝ Մուտրոսի զինադադարով էր պայմանաւորուած հայութեան ձգտումների յետագայ տապալումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ամփոփելով, պէտք է հաստատենք, որ Լիբանանի ու Սուրիայի ազատագրութիւնը թուրքերից իրականացուեց 1918ի աշնանը բրիտանական զօրքերի կողմից, որոնց կողքին իր որոշակի ներդրումն ունեցաւ ֆրանսական դրօշի ներքոյ կռուող Արեւելեան լեգէոնը: Հայ մարտիկներն էին, որ առաջինը ոտք դրեցին Պէյրութ: Հայկական գումարտակների վրայ յենուելով էր, որ Ֆրանսան փորձում էր ցոյց տալ իր ներկայութիւնը Մերձաւոր Արեւելքում, ուր խոշոր յաւակնութիւններ ունէր: Եղեռնից մազապուրծ հայ տարագիրները ուրախութեամբ էին ողջունում բրիտանացիների առաջխաղացումը, իսկ լեգէոնի հայ մարտիկները նրանց ոգեւորում, ապրելու յոյս էին տալիս: Հայ տարագիր երիտասարդներն անմիջապէս ցանկութիւն էին յայտնում կամաւորագրուելու Արեւելեան լեգէոնին, որպէսզի վրէժ լուծէին սպանուած ազգակիցների ու կորսուած հայրենիքի համար: Միաժամանակ, Հայկական լեգէոնի պաշտպանութեան տակ էր, որ տարագիրները վերադարձան Կիլիկիա: Հալէպի գրաւումից յետոյ Օսմանեան Կայսրութիւնը ստիպուած էր անձնատուութիւն խնդրել:

Մուտրոսի զինադադարի համաձայնագիրը երկսայրի սուր հանդիսացաւ հայութեան համար. մի կողմից առանց արիւն թափելու ազատագրւում էին Արեւելեան Հայաստանն ու Կիլիկիան, միւս կողմից Արեւմտեան Հայաստանը թողնւում էր թուրքական զօրքերի վերահսկողութեան տակ, որոնք չէին զինաթափւում: Դա իվերջոյ յանգեցրեց Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիայի ամբողջական եւ Արեւելեան Հայաստանի տարածքների գրեթէ կէսի կորստին:

THE LIBERATION OF LEBANON AND SYRIA FROM THE OTTOMAN TURKS IN 1918 AND THE ARMENIAN LEGION

(Summary)

SAMVEL POGHOSYAN (poghosyansamvel@yahoo.com)

Against the backdrop of the liberation of Syria and Lebanon from the Ottoman Turks by the Allied forces in September-October 1918, the paper focuses on the role the Eastern (Armenian) Legion played and the military operations it undertook from Port Said in Egypt to Cilicia.

archival materials, published analyses of military historians, and memoirs of legionaries, the advance of British troops and the Armenian Legion in Lebanon and Syria is narrated in detail.

The paper confirms that the Armenian legion was the first to set foot in Beirut, under the flag of the Allied Forces. The paper argues that the French forces, with their depleted numbers, capitalized on the success of the Armenian battalions, to assert their presence in the Middle East. The Armenian refugees who survived the Genocide welcomed the advance of the Armenian Legion. Young Armenian refugees expressed willingness to volunteer for the Armenian Legion as the latter was to become the core of the liberated Armenian homeland.

However, the French were quick to forget the promises they had given to the Armenians. Indeed, French politics shifted to pro-Turkish, and the French did not encourage the enlargement of the Armenian legion. On the contrary, they reduced its size and eventually disbanded it, thus killing the Armenian dream of a Cilician homeland.